

զրութեան հնարողը կոչուիլ։ Ոսխանակ առանց տրամաբանական զօդի մը պարզ նկարագրութիւններ ընելու, ջանաց ինքը յամենայնի գտնալ այն բնական ու ներքին վերաբերութիւններն որ կան 'ի մէջ երկրի և անոր բնակչացը։ աղբիւր առնելով իրեն այն ամէն տեղեկութիւններն որ պատմութիւնն ու բնական զիտութիւնք կը մատուցանեն, այն սիփի հետեւութիւններ հանեց՝ որոնք այսօրուան օրս աշխարհագրութիւնը տեսակ մը երկրիս բնախօսութիւնն ըրած են։ Ունէ որ այսպիսի յարգի կեանք մը գեռ քանի մը տարուան համար ալ երկնցած ըլլար հանդերձ մոտաւորական ուժով, անտարակոյս առաւել ևս յառաջադիմած կ'ըլլար աշխարհագրական զիտութիւնը։

### ՆԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ասիական ափունք վոսփորի։

Ծաղկագին Ասիական չէ ձեռակերտ մարդոյ, բնութեան անդ արարեալ զամենայն։ Չիք անդ Ալեօնուտ տէրէ և ոչ իժարտոդա, ոչ ապարանք գեսպանաց, և ոչ քաղաքք հայոց կամ Ծրանկաց։ անդ լերինք միայն, պարանոցք որ անջատեն զնոսա, հովիտք փոքրունք 'ի գորդ կանաչագեղ յարմատս քարաժեռուիցն պարզեալք, վտակք որ սողին, հեղեղատք որ 'ի փրփուրս իւրեանց սպիտակացուցանեն զնոսա, անտառք որ զկողից նոցա կախին և սողոսկին 'ի հոսանսն, որ իջանեն մինչ յեզերս անթիւ խորչից ծովափանն։ սաղարթուց և դալարեաց անդ զարմազան ձեւ և երանգ, զոր և զրիչ նկարչի չպիտէ ճարտարել։ տնակք աստ անդ ցիր տաճիկ նաւաստեաց կամ այգորդաց սփռեալք ընդ ափնն զիրերօք բացագոյն, կամ 'ի սարահարթս ամբարձեալ անտառախիտ ըլլոյ, կամ համախումք 'ի ծայր խարակաց, ուր վարեն զքեզ հոսանք և խորտակին յալիս կապոյտ՝ որպէս զերկնից զիշերոյ։ ձկնորսաց առագաստք ինչ

սպիտակք քերեալ առ ծոցսն խորաջուր սահին սօս 'ի սօսւոյ։ տարմ բազմահոյլ սպիտակաթոյր թռչնոց որ յափնածիր մարգս ցամաքին։ արծուիք 'ի գըլիսոց լերանց զծովու հոլաթե սաւառնեալ։ խորչք խորհրդականք, 'ի սպառկափուցեալք 'ի պարեխաց և յանչեթեթ կոչեցս ծառոց, որոց ծանրացեալ սատք յամնոց սաղարթուց, կքին զալեօքն և խանձարուրս յօրինեն 'ի ծովու, յոր խորչքն մտանեն։ զիւղօրեքինչ յստուեր խորչիցն թագուցեալք, 'ի թիկանց ունելով բուրաստանս ընդ դարեանդս դալարի, զխումբս ծառոց առ ոտս ափափայց, զկարկուրայսն գգուեալս առ զրամբքնոցա յալեաց ծիծաղախիտ, և զերամն աղանեաց 'ի տանիսիւրեանց։ կանայք նոցա և մանկտի 'ի պատուհանս, ծերունիք յոտս մնաբէից բազմեալ ընդ սօսեաւ։ մշակք որ յանդատանաց ելանեն 'ի նաւակս, այլք ծանրաբեանեն զմակոյկին 'ի խրձունս դալար, և 'ի մուրտ կամ 'ի ծաղկաւետհաւամբնգի՝ առ յարագել և յայրել ձմերանի։ զօղեալ ուրուք զկնի շեղջից սիզոյն կախելոց, որ զեղեալ 'ի ջուրան թանան, ոչ զնաւն և ոչ զթիավալար ոք նշմարէ։ և թուի բեկոր իմն ծովափին զերծ յերկրէ ըստ դիպաց 'ի ջուրցն հոսանաց, ծածանել զմկանամբք ծովուն կանաչազարդ իւր տերեւովք և ծաղկօքն անուշահոտ։

ԼԱՄԱՐԴԻՆ  
Ուղնորորին յԱյնելու։

### ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՋԻՆ ԴԱՄ<sup>1</sup>

Գերմանացի Միննեսինկերաց երգերը։

Ա.

Այն բանաստեղծական ու պատերազմական խանդն, որ կը բոլթոքէր միջին զարուն մէջ զ'ապղիա, զղլապա-

<sup>1</sup> Տես Համար էջ 272, 317, 373։ Համար էջ 110, 141, 178, 294։ Համար էջ 39։